Լծեն

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 128 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 24 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1560 մ,

Նախկին անվանումներն են Լիզին, Լիծին ցած, Լծե: Ավանդության համաձայն մոնղոլական հարձակման ժամանակ բնակիչները լեռան գագաթից քարե կարկուտ էին թափում, իսկ կրոնավոր Ներսես քերթողը ոգևորում է համագյուղացիներին ասելով լցե, լցե, որից էլ ծագել է գյուղի անունը: Ըստ 1781թ-ի հարկացուցակի գյուղը Տաթևի վանքին տարեկան վճարում էր 2250 գահեկան պտղի հարկ:
Գյուղի բնակիչների նախնիները այստեղ են գաղթել Խոյի գավառից՝ 1828-29թթ.: Գյուղում կա կանգուն եկեղեցի, մատուռ /կառուցված 1347թ/, իսկ գյուղիցհարավ-արևելք գտնվում է ս. Խաչ անունով ուխտատեղին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 52 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 38 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 160 գլուխ,
- խոզեր՝ 8 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 270:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 145 հա աշնանացա

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1615 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1375 հա, որից՝
- վարելահող՝ 248 հա, արոտ՝ 549 հա, այլ հողատեսք՝578 հա
- բնակավայրերի հողեր՝ 23 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝2 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 7 հա,
- անտառային հողեր՝ 200 հա, որից անտառածածկ՝ 200 հա
- ջրային հողեր՝ 7 հա